



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2026
Ապրիլ 13, 1995

Հոգեշնորհ
Տ. Բարգէն Ծ. Վրդ. Անուշեան
Հովիւ Ա. Թովմաս Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Թէնէֆլայ.

Սիրելի Հայր Բարգէն,

Ապրիլ 6, 1995—ին ստացուած են համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 13, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 29 եւ Փետրուար 12, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի վեց անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Մերի Չամչիքեան
Լիոն Նիկողոսեան
Ռիչըրտ Սարայտարեան
Մատլէն Աթեան
Ճէք Թորոսեան
Վիրճինիա Վիքթորիա

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:


Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Ծխական Ժողովին ներկայացուած Հովիւին Տեղեկագիրը չէ ստորագրուած ձեր կողմէ, ինչպէս նաեւ Ծխական Խորհուրդի Տեղեկագիրը չէ ստորագրուած Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ:

Մեր ուշադրութիւնը գրաւեց նաեւ որ Ծխական Ժողովի ատենագրութեան մէջ (էջ 7) արձանագրուած է Ծխական Խորհուրդի եւ ձեր միջեւ կնքուած հինգ տարուան **պայմանագրութեան** մը պարագան: Թեմական Կանոնադրութեան 41—րդ յօդուածը ունի հետեւեալ տրամադրութիւնը. «Համայնքի մը Հովիւը կ'ընտրուի հինգ տարուան պաշտօնավարութեան համար եւ կրնայ վերընտրուիլ: Հովիւը կրնայ հրաժարիլ եւ կամ հանուիլ իր պաշտօնէն՝ Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին որոշմամբ: Հովիւ մը կրնայ

իր պաշտօնէն հանուիլ նաեւ Ծխական Ժողովի որոշմամբ, պայմանաւ որ այսպիսի որոշում մը հաստատուի Առաջնորդին եւ Թեմական Խորհուրդին կողմէ»: Այս յօդուածին մէջ **պայմանագրութեան** մասին որեւէ արտայայտութիւն չկայ: Մեր թելադրութիւնն է որ նկատի ունենաք այս պարագան եւ ըստ այնմ պայմանագրութեան հարցը զանց առնէք: Իսկ Հովիտի հինգ տարուան պաշտօնավարութեան շրջանի հարցին կապակցութեամբ՝ անցեալ տարի եւս, Ապրիլ 7, 1995 թուակիր եւ 1730 թուահամար նամակով, ձեզի տուած էինք անհրաժեշտ բացատրութիւնը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունիւ



ԽԱԺԱԿ Ա.Ր.Ք. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ